

1888



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա-միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

«21» 02 2025թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 039 - 25

Նախաձեռնող՝

Քաղաքացի Անի Հարությունյան  
ք. Երևան, Անտրառային 128 շ., բն. 5

Գործունեությունը՝

Շենգավիթ վարչական շրջանի, Արարապյան փողոցի 84 հասցեում արտադրական նշանակության շինությունների կառուցում  
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 039 - 25

« 21 » փետրվարի 2025թ.

**Շենգավիթ վարչական շրջանի, Արարատյան փողոցի 84 հասցեում արտադրական նշանակության շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	Քաղաքացի Անի Հարությունյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ՝	/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան

**Ներածական մաս.** Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շենգավիթ վարչական շրջանի Արարատյան փ. 84 հասցեում գտնվող՝ 0.84317 հա հողամասում:

Տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվում է կառուցել մեծածախ առևտրի բազա՝ ավտոմեքենաների պահեստամասերի և կահույքի մեծածախ առևտուր իրականացնելու նպատակով: Այն իրենից ներկայացնում է մինչև երկու կիսանկուղային հարկով երեք մասնաշենքից բաղկացած և իրարից անջատված դեֆորմացիոն կարանով համապատասխան՝ 58.9x61.0 մ, 29.85x11.0 մ և 29.85x11.0 մ առանցքային չափերով կառույց: Առավելագույն բարձրությունը կկազմի մինչև 16 մ: Շենքի բոլոր երկաթբետոնե կոնստրուկցիաներում նախատեսված է ծանր լցանյութերով բետոն:

Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել **Երևան համայնքի** կողմից տրված 08.04.2024թ. N 01/18-01-173-24 նախագծման թույլտվությունը:



Արտադրական շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- շենքի ընդհանուր մակերեսը՝ 9272 մ<sup>2</sup>,
- շենքի շինարարակա ծավալը՝ 27816 մ<sup>3</sup> այդ թվում՝ 0,000 նիշից ցածր՝ 12908 մ<sup>3</sup>, 0,000 նիշից բարձր՝ 14908 մ<sup>3</sup>,
- կառուցապատման մակերեսը՝ 4363.4 մ<sup>2</sup>,
- հարկերի քանակը՝ 3,
- տեխնիկական հարկը՝ 1:

Կիսանկողային հարկում գտնվում են չայրվող նյութերի պահեստն ու հանդերձարանները: Չայրվող նյութերի պահեստը նախատեսված է չոր և փափուկ կահույքի պահպանման համար: 0.000 նիշում տեղակայված են՝ կահույքի արտադրամասը, չայրվող նյութերի պահեստը:

Հաշմանդամների և սակավաշարժ խմբերի համար ստեղծված են բոլոր պայմանները աշխատելու և սպասարկվելու համար:

- Նախատեսված է նաև 4363.5 մ<sup>2</sup> մակերեսով տարածք -3.750 նիշում, որը կարող է ծառայել բնակչության համար որպես պարզագույն թաքստոց:

Աստիճանավանդակների դռներ կլինեն հակահրդեհային և ինքնափակվող: Տարածքում մեքենաների մուտքը և ելքը նախատեսվում են տարբեր մուտքերով:

Նախատեսվող բազայի շենքերը՝ ներառյալ ստորգետնյա հարկերն ապահովված են լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով:

Արտադրական շենքի ջեռուցումն ապահովելու համար տանիքում նախատեսված է կաթսայատուն, որը զբաղեցնելու է 20 մ<sup>2</sup> մակերես: Ծխագազերը հեռացվելու են բնական ճանապարհով՝ տանիքից 7,0 մ բարձրությամբ d350 մմ տրամագծի մետաղական խողովակներով:

Շենքի ստորգետնյա, վերգետնյա, պահեստային տարածքներում և ադմինիստրատիվ մասնաշենքում նախատեսվում է հակահրդեհային ջրամատակարարում և ավտոմատ հրդեհամարման համակարգ:

**Օդափոխություն** Տարածքում նախատեսված է արհեստական դրդմամբ օդափոխության համակարգ, ինչի համար շենքի տանիքում նախատեսվում է տեղադրել օդի ներածման-արտածման սարքեր՝ համալրված ռեկուպերատորներով:

Համաձայն նախագծի՝ արտադրական շենքի էլեկտրամատակարարումը կատարվելու է տարածքում գործող տրանսֆորմատորային ենթակայանից՝ համալրված 1 հատ 1000 կՎտ հզորությամբ տրանսֆորմատորով և շինության տարածքում տեղադրված 1000 կՎԱ դիզել-գեներատորով:

Նախագծվող շենքի ջրամատակարարման համակարգը սնվելու է տարածքում գոյություն ունեցող ցանցից՝ Ø50 մմ տրամագիծ ունեցող խողովակից:

Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվելու են 9 մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով: Նկուղային հարկերում նախատեսված են ջրամատակարարման պողպատյա խողովակներ, չժանգոտվող կամ ցինկապատ պողպատից:

Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել տանիքում տեղակայվող



կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից:

Կենցաղային կոյուղու ցանցն ինքնահոս է: Նկուղային հարկերում սանհանգույցները համակարգին միանում են ինքնահոս: Կեղտաջրերը ինքնահոս հեռանալու են բակային ցանց, որը միանալու է կոյուղու բակային ցանցին:

Բակային հատվածում նախատեսվում են նաև բացօթյա ավտոկայանատեղիներ աշխատակիցների համար՝ 50 մեքենայի համար:

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է տարածքում առկա ջրագիծը: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Հաշվարկներով հիմնավորվել է, որ աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է նորմայի սահմաններում: Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 32940 մ<sup>3</sup> ծավալով հողային աշխատանքներ: Հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման համար նախատեսվող աշխատանքների ընթացքում առաջանալու է հողային զանգված, որից 18882 մ<sup>3</sup> ծավալով գրունտը կօգտագործվի հետլիցքի, իսկ մնացած՝ 14058 մ<sup>3</sup> հողը կտեղափոխվի աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի 100 մ<sup>2</sup> մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ գազոնի տեսքով և ծաղկանոցով:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ իրականացվելու է գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան,
- շինարարական աշխատանքների ընթացքում շինհրապարակը ցանկապատվելու է, կառուցվող շենքերը ծածկվելու են համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,



- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
  - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
  - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումն ու տեխնիկական սպասարկումն իրականացվելու է տարածքից դուրս՝ համապատասխան մասնագիտացված կետերում,
  - իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում,
  - շինարարական թափոնները՝ շինադրը, բետոնյա մնացորդները, պարկերը և այլն, հավաքվելու են անջրաթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և տեղափոխվելու են համայնքի կողմից հատկացված վայր,
  - աշխատանքներն ավարտելուց հետո մաքրվելու են բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
  - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
  - շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
  - օգտագործվող շինտեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
  - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
  - կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- Արտադրամասի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շինարարության փուլում ամենօրյա,
  - փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցան, տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
  - օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ ամենօրյա հաճախականությամբ,
  - աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
  - գործունեության և հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիսը մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 4.2 մլն ՀՀ դրամ:



**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ներառված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերը պահպանելու նպատակով:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ «Օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
6. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, չափոմների միջոցով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
7. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:



## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Անի Հարությունյանի կողմից ներկայացված Շենգենյան վարչական շրջանի Արարատյան փողոցի 84 հասցեում արտադրական նշանակության շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովիկ Մետրոսյան